քաղաքիս մէջ, նոյնպէս և քաղաքէս դուրս՝ սարերուն վերայ ու հովտաց մէջ, տասը ժամուան ճանապարհ, ընդարձակ տարածութեան վերայ, ի Թէոդոսիոյ մինչև ցՍ. Խաչ, հայկական քաղաքը (առ Գենուացւովք աղաւաղելով Սուրխաթ եղել է, այժմ Հին-Ղրիմ), և ի Ս. Խաչէ մինչև ցՂարապազար 65 վերստ հեռաւորութեան միջոց շինած են հարիւր հազար տուն, լեռները և սարերը զարդարել են խաչապակ եկեղեցեաք և վանորէիք։ Եկեղեցեաց թիւը մինչև հազարի կը հասցնէ հին յիշատակարանը, «շինեցաք եկեղեցիս հազար» գրուցելով։ Այս թիւը, անշուշտ շատերուն, չափազանցօրէն գրուցուած կ'երևի, այլ մեք որ ականատես եղած եմք բազմաթիւ կիսաւեր քարուկիր ազգային եկեղեցեաց, Ղրիմու սարերուն վերայ, այնպէս կը համարիմք, որ՝ եթէ ոչ հոյակապ եկեղեցեաց, այլ ամրակուռ և փոքրադիր մատրանց թիւը, կարի շատ եղած է 1330-1475 թուականաց միջոց։ Այդ եկեղեցեաց մի մեծ մասը, բուն Թէոդոսիոյ մէջ շինուած են, հնագոյնք՝ Գենուացւոց պարսպին ներքնակողմը, նորաշէնք պարսպէն դուրս, հայկական պարսպին մէջ. և այլ շատեր պարսպէն ևս դուրս մնացել են։ Այսպէս մեծ եղած է, Անեցի Ղրիմաբնակ Հայ ժողովրդոց ժամասիրութեան և եկեղեցաշինութեան եռանդը ժամանակաւ։ Շէն և պայծառ հնչած են այդ եկեղեցիք, յընթացս 145 տարիներու հայկական ժամասացութեամբ։ 1475 թուականին շատ պակսաց է Հայոց թիւը, որով և եկեղեցեաց մի մասը, անծուխ և աւերակ մնացել են. այլ վերջին գաղթականութիւն ազգիս (1778) ի Տաւրիոյ յԵկատերինեսլաւ, Դոնեան աշխարհքը, բոլորովին անմարդի և անհայ թողած է, երբեմն